

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Երրունակութիւն 1)

1 լուսիսի.

Երէկ հեռագիր ստացայ Գաշտէնից, Պանի Յելլինայի ու Անկլ-կայի համար ընկարան արդէն վարձուած է: Ուղարկեցի նրանց այդ հեռագիրը Ժորժ-Սանդի ու Բալզակի վէպերի մի ահագին կապոցի հետ: Այսօր կիրակի է, ձիարշաւի առաջին օրը: Հօրաքոյրս Պլոշ-վից եկել է ու ինձ մօտ է կենում: Անշուշտ արդէն եղել է արշա-ւահանդէսում. ուշ ու միտքը ձիարշաւի հետ է: Բայց մեր կեանքը՝ «Naughty-boys»-ն ու «Aurora»-ն, որոնք Վէրի ու Ժօկէյ Ջէկ Գուսի հետ երկու օր է արդէն իմ ախուսատանն են, հետեւեալ հինգշաբթի են արշաւելու, այնպէս որ ձիարշաւի առաջին օրը միայն պլատոնական կերպով էր հետաքրքրում հօրաքրոջս: Դրա փոխարէն՝ դժւար է նկարագրել թէ ինչ է կատարւում մեր տանը: Մեր զոմերը ամբողջ են դարձել: Հօրաքոյրս կարծում է, թէ ուրիշ ձիատէրերի ժօկէյները դողում են «Naughty-boys»-ի անունը լսե-լիս և թէ նրանք պատրաստ են ամեն միջոց դորժ դնել նրան արշաւելու անընդունակ դարձնելու կամ թուլացնելու համար:

1) Տես «Լուսիս» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7-8, 10, 11, 12.

ուստի ամեն մի փողոցային երգեհոն ածող կամ նարինջ ծախող նրա աչքին ծալուած թշնամի է երևում, որ չար դիտաւորութեամբ աշխատում է գաղտուկ մոնել մեր բակը: Դռնապանն ու գիշերապահը խիստ պատէր են ստացել ուշ դարձնել ամեն մի մոնող, դուրս եկողի վրայ: Ախուստանը հսկողութիւնը աւելի ևս խիստ է: Զիափարժ Վէբը, իբրև իսկական անգլիացի, սառնասիրտ է պահում իրան, բայց խեղճ Ջէկ-Գուսը, որ բուժանքեցի է և որի անգլիական անունը բառացի թարգմանութիւն է լեհերէն «Վուբա Գոնսիրոյ-ից» (սագ Ծակոբ), գլուխը բոլորովին կորցրել է, որովհետև հօրաքոյրս անդադար հայհոյում է թէ նրան և թէ երկու ուրիշ ախուսապանների, որոնք նոյնպէս եկել են Բուժանքից՝ ձիերին պահելու: Հօրաքոյրս այն աստիճան «Naughty-boys»-ի կողքից չէր հեռանում, որ ես նրան գրելէ չէի տեսնում, այնպէս որ հազիւ Պլոշով գնալուց մի քիչ առաջ կարողացաւ ինձ հաղորդել այն ուրախալի լուրը, թէ պանի Յելինան այժմ քիչ ու միշտ լաւացել է ու վճռել է, որ Անեկլան անպատճառ գնաց հինգշաբթի օրւայ ձիարշաւին: Երևի պանի Յելինան հասկացել է, որ այդ՝ զւարճութիւն կը պատճառի հօրաքոյրս, թէև ասեմք ճիշտ որ նրան ոչինչ չի լինիլ, եթէ որ մի օր աղախինների ու բժշկի խնամքին թողնուի: Միւս կողմից էլ Անեկլային, որ բանտարկեալի նման փակւած նստած է տանը, չիրաւի անհրաժեշտ է գոնէ մի քանի ժամով դուրս գալ Պլոշովից, որ սիրտը մի քիչ բացուի: Ես որ՝ հօ ուրախութիւնիցս չը գիտեմ ինչ անեմ: Հէնց միայն այն միտքը, թէ Անեկլան իմ յարկի տակն է գոնեւելու, զհալեցնում է հոգիս: Այս տանն եմ սկսել սիրել նրան, և գոցէ հէնց նրա սիրտն էլ առաջին անգամը աւելի թունդ է բարախել ինձ համար նոյնպէս այստեղ, հօրաքոյրս՝ ի պատիւ իմ սարքած երեկոյթից յետոյ: Այստեղ ամեն ինչ կը չեցնի նրան այդ բոպէն:

2 Երեմիա.

Լաւ է, որ դեռ ևս չեմ պատուիրել դահլիճը թանգարան դարձնել: Խելքս մտաւ ձիարշաւից յետոյ ճաշի հրաւիրել մի քանի այնպիսի մարդկանց, որոնք սիրելի են Անեկլային: Այդպիսով նրան մէկ-երկու ժամ աւելի կը պահեմ իմ յարկի տակ և բացի այդ նա կը հասկանայ, որ այդ ճաշը տրոււմ է իւր համար, իւր պատւին:

3 լուծիւի.

Աշխարհքի ծաղիկ առայ և պատւիրեցի ծաղկազարդել ամբողջ սանդուղքն ու երկու դահլիճները: Անելկայի սենեակը մնացել է այնպէս, ինչպէս էր այն ժամանակ, երբ Անելկան էր կենում նրանում: Կարծում եմ, որ տիկիները առաւօտեան կը դան և Անելկան կը ցանկանայ ձիարշաւից առաջ շորերը փոխել այնտեղ, ուստի պատւիրեցի այդ սենեակը տանել մի մեծ հայելի և ուրիշ ինչ որ հարկաւոր է կնոջ արդուզարդի համար: Անելկան ամենուրեք կը տեսնի իմ հոգատարութեան, յիշողութեան ու սիրոյ ասպացոյցները: Միմիայն այժմ, գրելիս եմ նկատում, թէ որքան ինձ լաւ եմ զգում, երբ պարագում եմ մի բանով, երբ արտաքին գործունէութիւնը հանում է ինձ բէֆլէքսիայի ու ինքնազննութեան կախարդած շրջանից: Իմ կարծիքով եթէ ապագայ թանգարանի պատկերների համար պատերին մեխեր խփէի, աւելի բան արած կը լինէի, քան այժմ, երբ շարունակ զբաղւած եմ մի միտք մի ուրիշ մտքի շորս բոլորքը փաթաթելով: Ախ, ինչո՞ւ այլ ևս անհնար է ինձ պարզ մարդ դառնալ: Եթէ իւր ժամանակին կարողանայի այդպիսի մարդ լինել, այժմ աշխարհիս ամենաերջանիկ մարդկանցից մէկը կը լինէի:

4 լուծիւի.

Այսօր գնացի հրաւիրեցի Մնեատինսկիներին և մի քանի ուրիշ մարդկանց: Մնեատինսկին, կարծես զուշակելով իմ ցանկութիւնը, շորս կողմը լուր է տարածել, թէ հօրս հաւաքածուները փոխադրում եմ Վարշաւա և հիմնում եմ հասարակութեան համար մասնաճիւղի թանգարան: Սա այժմ օրաց հերոս եմ դարձել: Բոլոր լրագիրներում երկար ու բարակ գրում են դրա մասին, և օգտւելով չարմար աւիթից, քարոզներ են կարդում հարուստների գլխին, տրոնք իրանց փողն ու ժամանակը կորցնում են արտասահմանում: և այլն: Սա այնքան լաւ ծանօթ եմ նրանց ոճին ու գրելու ձևին, որ առաջուց գիտէի, թէ ինչ էին գրելու, սկսած յօդւածների բովանդակութիւնից և վերջացրած առանձին-առանձին ֆրագներով, ինչպէս օրինակ՝ «noblesse oblige» և այլն: Բացի այդ բոլորը ինձ ձեռնառու է: Սա մի կապոց լրագիր հաւաքեցի հօրաքրոջս ու Անելկային ցոյց տալու համար:

5 լուսիսի.

Ձիարչաւը մի օր առաջ է նշանակած վաղւան տօնի պատ-
ճառով: Անեկան ու հօրաքոյրս եկան այսօր առաւօտեան աղախնի
հետ, բերելով հետները ձիարչաւի համար զգետեղէն պարունակող
արկղների ահագին մի կոյտ: Անեկացի վրայ նայելուն պէս յուզեցի
ու վախեցայ: Ինձ թւաց, որ նա սաստիկ ընկել է, թշերը դեղնել
են, կորցրել է իւր առաջւան ջերմ եռանդը, լշարել է և մէջը
ինչ որ մշուշային բան էր երևում, որ ինձ յիշեցնում էր Puvis de
Chavannes-ի կերպարանքները: Հօրաքոյրս ու նրա մայրը այդ չեն
նկատում, որովհետեւ շարունակ նրա հետ են լինում, բայց ինձ
համար, որ մի քանի օր է Պլոշովում չեմ եղել, զանազանութիւնն
արդէն նկատելի է: Աիրոս լցում է ապաշաւանքով ու կարեկցու-
թեամբ: Ակներեւ է, որ այդ բոլորի գլխաւոր պատճառը նրա սրտում
կատարւող կռիւնն է: Եթէ նա ուզենար վերջ դնել այդ կռիւն,
եթէ նա ցանկանար հետեւել իւր սրտի ձայնին, — սրտի, որ պատ-
կանում է ինձ և բարեխօսում է ինձ համար, — այն ժամանակ նրա
անհանգստութիւնը կը վերջանար ու կսկսէր բախտաւորութիւնը:

Օրէցօր աւելի ու աւելի խոր եմ թաղւում ոտնաոտյղ աւա-
ղիս մէջ: Ինձ թւում է թէ գիտեմ Անեկացի դէմքի ամեն մի
մանրամասնութիւնը, ամեն մի թէկուզ ամենամանշան՝ դիժը և թէ
նրան չը տեսած ժամանակս այնպէս եմ երևակայում նրան, որպէս
թէ առաջիս կանգնած լինի, և սակայն ամեն անգամ երբ մի քանի
օրւայ անջատումից յետոյ նորից տեսնում եմ նրան, մէջը մի նոր
հրապոյր եմ գտնում ու նոր զւարճութիւն ստանում: Ասել անգամ
չեմ կարող, թէ ինչ աստիճան բաւականութիւն է տալիս նա իմ
բոլոր էսթետիկական պահանջներին, որքան խոր եմ զգում, թէ
նա իմ տեսալիցն է, իմ գեղեցիկութեան իդէալն է, իմ տենչած
կինն է: Այդ զգացումը ինձ կէս միստիկական, կիսով չափ էլ բնա-
գիտական հիպոթէզին համապատասխանող հաւատ է ներշնչում,
թէ բնութիւնը նրան ինձ է վիճակել: Այժմ էլ որ անիւների
ձայնը լսելով վազեցի ներքեւ հիւրերին դիմաւորելու, նորից ինձ
տիրեց այն զգացմանը, որ ես կանւանէի հպատակումն նրա հրա-
պոյրների ոյժին, նորից իրականութիւնը ինձ աւելի կատարեալ
երեաց, քան այն պատկերը, որ կրում էի սրտումս:

Անելկան հագել էր անթափ մետաքսից ճանապարհի թեթև վերարկու. գլխարկը շրջապատուած էր երկար մոխրագոյն քողով, որ կապուած էր à l'anglaise կզակի տակից, իսկ այդ մոխրագոյն շրջանակի միջից ժպտում էր նրա չքնաղ, քաղցր դէմքը, որ՝ ինչպէս միշտ՝ աւելի փոքրիկ աղջկայ դէմքի էր նմանում, քան արամբի կնոջ։ Նա ինձ բարեւեց սովորականից դուրս ուրախ ու սրտազին. — երևում էր, առաւօտեան ճանապարհորդութիւնն ու ձիարշաւից ստանալիք զւարճութեան յոյսը շատ լաւ էին ազդել նրա տրամադրութեան վրայ. այդ իմ սիրտս լցրեց բերկրանքով, որովհետեւ հիմք տւեց ինձ մոռճելու, որ ինձ տեսնելը նրա ուրախութիւն է պատճառում և որ Պլոշովը, իմ այնտեղ չեղած ժամանակը, նրան դատարկ ու տաղտկալի է թւում։

Իբրեւ հիւրասէր տանտէր մի թեւս տւեցի հօրաքրոջս, միւսը՝ Անելկային (տանն սանդուղքները շատ լայն են, այնպէս որ կարելի է երեքով կողքէ կողք բարձրանալ) և այդպէսով նրանց տարայ վերել։ Վեր բարձրանալիս նրանք սաստիկ զարմացան, տեսնելով չքեղ ծաղկազարդած սանդուղքները։

— Այդ իմ սիրալիրին է, — ասացի ես։

Այդ ասելիս թւովս սեղմեցի Անելկայի կուռը, բայց այնքան կամաց, որ արածս կարելի էր չանկարծական ու ակամայ շարժումից յառաջացած համարել, յետոյ դարձաջ հօրաքրոջս։

— Ճաշ եմ տալիս ի պատիւ Պլոշովսկիների տոհմի յաղթութեան։

Հօրաքրոջս այդ շատ խանդադատեցրեց։ Ախ, եթէ իմանար, թէ որքան քիչ էին հետաքրքրում ինձ այդ բոլոր «Naughty — boys»-ն ու այն բոլոր յաղթութիւնները, որ կարող էին տանել Պլոշովսկիների կեանքը ամբողջ Եւրոպայի արշաւահանդէսներում։ Անելկան, ընդհակառակը, ինչպէս երևում էր հասկացաւ, թէ ինչ մոքով պէտք է ընդունել իմ ասածս, բայց այնքան ուրախ-զարթ տրամադրուելու մէջ էր, որ թռուցիկ հայեացք դրելով ինձ վրայ, ժպտաց ու շրթունքը կծեց։

Քիչ էր քնում դուխս կորցնելի։ Ինձ թւում էր, թէ Անելկայի մէջ նկատուում է մի տեսակ ուրախ կոկետութեան նշոյլ, որ մինչև օրս նրա մէջ չկար։ Անկարելի բան է, մոռճեցի ինձ ու

ինձ, որ նա ինքնասիրութիւնից բոլորովին զուրկ լինի, որ նրա սրտին դուր չգալ ասն, որ ինչ որ անում եմ, նրա համար ու նրա շնորհիւ եմ անում:

Մինչ այդ՝ հօրաքոյրս վերարկուն հանեց ու դնաց ակը տալու «Naughty—boy»-ին ու «Aurora»-ին, իսկ ես տեցի Անեղկային ճաշի հրաւիրւածների ցուցակն ու առացի:

—Աշխատել եմ ընտրել միմիայն քեզ հաճելի մարդկանց, բայց եթէ կուզես որ ուրիշներին էլ կանչեմ, իսկոյն հրաւիրատունս կուղարկեմ կամ ինքս կերթամ հրաւիրելու:

—Հօրաքրոջը ցոյց տուր — պատասխանեց Անեղկան — թող նա ընտրի:

—Զէ: Հօրաքոյրը կը նստի սեղանի գլխին ու մենք կը մօտենանք նրան շնորհաւորելու կամ ցաւակցութիւն յայտնելու: Բայց տանտիրուհու դերը այս տանը դու պէտք է կատարես:

Անեղկան մի քիչ կարմրեց ու խօսակցութեան նիւթը փոխելու համար ասաց.

—Դու ասա, Լէօն ջան, «Naughty—boy»-ը յաղթութիւնը տանի. հօրաքոյրը սաստիկ չոյս ունի ու չափից վեր հետաքրքրւում է դրանով:

—Ես որ արդէն տարել եմ, որովհետեւ իմ տունը հիւր է այն էակը, որ այժմ առաջիւս նստած է:

—Դու հէնց կատակ ես անում, իսկ ես իսկապէս վախենում եմ:

—Դիտես ինչ կայ, — պատասխանեցի ես լրջօրէն — եթէ «Naughty»-ը մրցանակը չը տանի էլ, հօրաքոյրը էլի ուրախանալու մեծ պատճառ կունենայ: Իմ հաւաքածուները մի քանի շաբաթից յետոյ վարչաւանդումը կը լինեն, իսկ տասը տարուց աւելի կը լինի, որ այդ նրա սրտի ամենամեծ փափագներից մէկն է: Հօրս շատ էր յորդորում, որ հաւաքածուները փոխադրի այստեղ: Արդէն բոլոր լրագիրները յօդւածներ են տպում դրա վերաբերմամբ և էլ ասել չեմ կարող թէ ինչ գովասանքներ են գրում իմ մասին:

Նրա քաղցր երեսը ձեռաց զւարթացաւ:

—Ցոյց տուր, կարդա՛ լսեմ, — ասաց նա:

Նրա ուրախութիւնը որ տեսայ, քիչ էր քնում ձեռները բռնելի ու համբուրելի: Այդ ինձ համար մի նոր ապացոյց էր, որովհետեւ

եթէ նա անտարբեր լինէր դէպի ինձ, իմ մասին գովասանքները նրան ուրախութիւն չէին պատճառել:

—Զէ, պատասխանեցի ես,—կը կարդամ երբոր հօրաքոյրը դայ կամ աւելի լաւ՝ կը խնդրեմ նրան, որ նա կարդայ, իսկ ես այդ միջոցին թաք կը կենամ քո յետեւին, որովհետեւ այդ ժամանակ յիմար կերպարանք կունենամ, իսկ ես չեմ ուզում, որ դու տեսնես ինձ այդպիսի կերպարանք ունեցած ժամանակս:

—Ինչու պէտք է յիմար կերպարանք ունենաս:

—Նրա համար, որ այդ իմ արածը չէ, քո արածն է: Այդ գովասանքները քեզ պէտք է վերաբերեն: Ինչ ասես կը տայի, միայն թէ կարողանայի պարոն ժուրնալիստներին ասել, —«եթէ դուք այդքան մեծ բան էք համարում այդ, վեր կացէք գնացէք Պլոշով ու ծունկ չոքէք այն ոտների մօտ...»

—Լէճն, Լէճն,—ընդհատեց Անելկան:

—Կամաց, թէ չէ ես էլ նոյնը կանեմ ու վեր չեմ կենալ, մինչև որ չը համաձայնես, որ քո ազդեցութեան շնորհիւ եմ արել այդ:

Անելկան չէր իմանում ինչ պատասխանէր ինձ: Ծիշո է՝ իմ ասած խօսքերը սիրահարութիւնից դժւածի խօսքեր էին, բայց ազատ, կատակական ու ուրախ տոնս այնպիսի տրամադրութիւն չառաջացրին, որ միանգամայն անհնարին էր տրադիկարար ընդունել ասածս:

Իսկ ինձ ուրախութիւն պատճառեց այդ նոր ձևը, որովհետեւ տեսայ, որ նրա միջոցով կարելի է շատ բան ասել ու շատ խոստովանութիւն անել:

Սակայն չուզենալով ոչ իշարը գործ դնել այդ ձևը, ոչ էլ երկարացնել այդ տոնով սկսած խօսակցութիւնը, իսկոյն սկսեցի խօսել այն փոփոխութիւնների մասին, որ մտադիր եմ անել տանս մէջ:

—Ամբողջ յարկը յատկացնում եմ թանգարանին,—ասացի ես,—բացի այն սենեակից, որի մէջ դու ապրում էիր անցեալ ձմեռ: Նա կը մնայ այնպէս, ինչպէս որ էր: Նս միայն թոյլ աւեցի ինձ մի քիչ զարդարել այսօր այդ սենեակը քո դալու պատճառով:

Այդպէս խօսելով տարայ նրան դէպի դուռը:

Անելկան կանգ առաւ շեմքի վրայ և չը կարողացաւ զսպել իրան ու բացականչեց՝

—Ախ, ինչ հիանալի ծաղիկներ են:

—Դու ինքդ աշխարհիս ամենաչքնաղ ծաղիկն ես,—ցած ձայնով պատասխանեցի ես, ու յետոյ լրջութեամբ աւելացրի.—հաւատաւ, Անեկա, սուտ չեմ ասում. ես կուզէի այս սենեակում մեռնել:

—Ս'Ք, որքան անկեղծութիւն կար ասածիս մէջ: Անեկայի երեսը մթնոլորտ, կարծես մշուշով ծածկեց, ուրախութիւնը կորաւ: Տեսայ, որ ասածս սաստիկ յուզեց նրան, ինչպէս յուզում է սրտի իւրաքանչիւր անկեղծ հեծութիւն: Մի վայրկեան նրա դուռը, ձեռներն ու կուրծքը ցնցեցին, կարծես նրա յետեւից յանկարծ մի ինչ որ զօրութիւն հրեց նրան դէպի ինձ: Բայց այս անգամ էլ նա ինքն իրան չաղթեց: Մի բոպէշափ կանգնած մնաց առաջիս՝ աչքերը կիսախուփ և ի վերջոյ ասաց մի տեսակ տխրագին լրջութեամբ.

—Թող քեզ հետ ազատ լինեմ: Ինձ մի՛ վշտացնիր:

—Լաւ, Անեկա,—ասացի ես,—դաշինքը կապած է. ահա իմ ձեռքը:

Եւ ձեռքս մեկնեցի դէպի նա: Անեկան այնպէս պինդ սեղմեց ձեռքս, կարծես դրանով ուզելիս լինէր արտայայտել այն բոլորը, ինչ որ արգելել էր ասել լեզւին: Այդ ինձ համար հազար խօսքից լաւ էր և այն աստիճան ուրախացրեց ինձ, որ քիչ էր մնում հարբածի պէս կանգնած տեղումս երերալի: Վերադարձիցս յետոյ այդ առաջին անգամն էր, որ պարզ զգացի, թէ տիրանում եմ Անեկային, այնպէս որ այսուհետեւ նա հոգով—մարմնով ինձ է պատկանելու: Այդ այնպիսի անհուն երջանկութեան զգացումն էր, որ դրա հետ միասին սիրտս մի տեսակ ահ էր զգում: Առաջիս բացւում էր մի նոր, ինձ անյայտ աշխարհ: Այդ բոպէից սկսած ես համոզւած եմ, որ նրա դիմադրութեանը վերջ տալու համար ոչինչ պէտք չէ բացի ժամանակից, կարճ ժամանակից, ու իմ համարձակութիւնից:

Հօրաքոյրս վերադարձաւ ակոռատնից վարդազոյն տրամադրութեամբ. «Naughty—boy»-ի թանկագին առողջութեան դէմ ոչ մի փորձ տեղի չէր ունեցել: Զիտվարժ վէրը հօրաքոյրս բոլոր հարցերին միայն մի բան է գտել պատասխանելու,—«All right»—Ձեզ

Գուան էլ սաստիկ աշխոյժ է եղել: Մենք մօտեցանք պատուհաններին տեսնելու համար թէ ինչպէս էին դուրս բերելու ապագայ յաղթողին, որովհետեւ մօտենում էր այն բոպէն, երբ նա պէտք է գնար Մոկոտովսկի դաշտը ու այնտեղ կանգնած տեղում դուրս պալսելով իւր հերթին: Եւ իրօք մի քանի բոպէ անցած մենք տեսանք, թէ ինչպէս երկու ակոռապաններ դուրս քաշեցին նրան բակը, բայց մեր աչքերը շատ էլ չէին կարող զւարճանալ նրա մարմնաձեւերի զեղեցկութեամբ, որովհետեւ կարծես նրան կոխել էին մի տուրակի մէջ ու կարելի ճապճակի վերեւի ծակերից երևում էին միայն նրա մեծ-մեծ ու հեղ աչքերը, իսկ ներքեւի բացածքից դուրս էին պրծած նրա առաձգական ոտները, որոնք արդարեւ կարծես պողպատակուռ լինէին: «Naughty—boy»-ի յետեւից գալիս էր Վէբը, իսկ ամենայնուհի մեր տանու (домоприемный) փոքրիկ անգլիացի Զէյ Գուսը, որ հագել էր ժոկէյի ոտնամաններ ու բաճկոնի վրայից նոր սիւրտուկ: Եւ ձայն ուեցի նրան բաց պատուհանից.

—Անունդ զետնով չը տաս, Կուբա:

Նա գլխարկը վերցրեց ու ցոյց տալով նրանով «Naughty—boy»-ի վրայ, ուրախ-ուրախ պատասխանեց ամենամաքուր, ոչ լոնդոնացու, այլ բուժանացու արտասանութեամբ.

—Միայն զաւակը կը տեսնեն, ձերդ վսեմափայլութիւն:

Նստեցինք նախաճաշելու: Թէև շատ շտապում էինք նախաճաշը շուտ վերջացնել, բայց հօրաքոյրս էլի ժամանակ գտաւ սուրճ խմելիս կարդալ հօրս հաւաքածուների Վարշաւա փոխադրելու մասին լրագիրներում տպւած յօդածները: Զարմանալի բան է, որքան դիւրազգաց են կանայք դէպի ամեն մի հրապարակական գովասանք, որ վերաբերւում է իրանց մօտիկ տղամարդկանց: Հօրաքոյրս ուրախութիւնից ծաղկի պէս բացւեց և միանգամայն անմիան էր, երբ, ընթերցումը անկադար ընդհատելով, ակնոցների վրայով մերթ հիացմունքով ինձ էր նայում, մերթ ուշի ուշով Անելկային, և ժամանակ առ ժամանակ ասում էր դողմատիկական տոնով.

Ոչինչ չեն չափազանցեր: Լէօնը միշտ այդպէս է եղել:

Եւ միայն փառք էի տալիս Ասածուն, որ այդ ժամանակ ոչ մի սիւսպիկ տղամարդ չկար, թէ չէ անշուշտ շատ չիմար կերպարանք կունենայի:

Տիկինների հագնելու ժամը հասաւ: Հագնելու զնալիս հօրաքայրս, որքան կարելի էր անտարբեր արտայայտութիւն տալով դէմքին, ասաց.

— Պէտք է շտապենք. օրիորդ Զաւիովսկային խոստացել եմ հետս տանել արշաւահանդէս. հօր հետ պէտք է գնար, բայց հօր ոտները երկու օր կը լինի բռնւել են:

Այդ ասաց ու գնաց. ես ու Անելկան նայեցինք իրար երեսի, նրա բերնի ջհակները բարձրացան խորամանկ ժպիտից, իսկ ես ասացի.

— Տեսնում ես, Անելկա, նոր հարսնախօսութիւն է:

Նա մտոր դրեց բերնին, իբր զգուշացնելով ինձ բարձրաձայն խօսելու համար ու անյայտացաւ իւր սենեակում, բայց մի րոպէ անցած՝ նրա սիրուն զուլը նորից երևաց դռան յետեւից:

— Յիշեցի որ օրիորդ Հիլտին չես հրաւիրել, — ասաց նա:

— Այո, չեմ հրաւիրել:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես նրան սիրում եմ աչքիս առաջ չեղած ժամանակը, — պատասխանեցի ես ժպտալով:

— Կատակը դէն կենայ. ինչո՞ւ նրան չես հրաւիրել:

— Եթէ ուզում ես, այժմ կը կանչեմ:

— Ինչպէս քէֆդ կուզի, — պատասխանեց նա ու նորից անյայտացաւ:

Իմ քէֆս ուղեց չը հրաւիրել օրիորդ Հիլտին:

Մի ժամ անցած մենք ճանապարհ ընկանք դէպի Բէլէդէրեան ծառուղին: Անելկան անկաճաղարդ բաց-գոյն շոր էր հագել: Այնպէս վարժւել եմ ամեն ինչ նրան աչքերովս չայտնել, որ նա հայեացքիս մէջ պարզ տեսնում էր հիացմունքս. ես այդ հասկացայ նրա դէմքից, որ միաժամանակ և՛ բերկրանք էր արտայայտում, և՛ մտահոգութիւն: Ճանապարհին կառքը կանգնեցրինք Զաւիովսկիների ամառանոցի առաջ: Զանգը խփեցի թէ չէ, դուռը բացւեց ու պաննա Հելենան գորշ-արծաթադոյն հագուստով կանգնեց կողքիս կամ, աւելի ճիշտ ասած, վահանաձեւ սլացաւ կողքովս հազիւ զուլս տալով ինձ: Օրիորդ Զաւիովսկան աւելի ազեղ քան սիրուն շէկ աղջիկ է, սառը, բաց-կապտադոյն աչքերով, անժպիտ

դէմքով, չափից դուրս նազանի շարժումներով: Նա համարուում է կատարելատիպ ազնւակրթութեան, որին ես յօժարութեամբ կը համաձայնէի, եթէ որ կիրթ ձևերի տէր համարէինք ամեն մի մարդու, որ շամփուր կուլ տաճի պէս ձգաճ է պահում իրան: Նրա վարմունքը ինձ հետ նրա աչքերի պէս սառն է, և այն աստիճան սառը, որ դժւար է երևակայել թէ անկեղծ լինի:

Նա անշուշտ դիտումս վարմունքի այդպիսի եղանակ է ընտրել, յուսալով այդպիսով գրգռել իմ ինքնասիրութիւնը, և շատ չիմարութիւն է արել, որովհետև այդ՝ ինքնասիրութիւնս չի գրգռում, այլ միայն ձանձրացնում է ինձ ու դրա շնորհիւ ես նրանով միմիայն այնքան եմ զբաղւում, որքան պահանջում է քաղաքավարութիւնը:

Սակայն այսօր նրանով սովորականից մի քիչ աւելի էի զբաղւում, որովհետև նա ինձ համար շանթարգելի դեր էր խաղալու, այսինքն հասարակութեան հետաքրքրութիւնը իւր կողմն էր գրաւելու և փարատելու էր այն կասկածները, որոնց կարող էր տեղիք ապա իմ ու Անելկայի մի կառքում նստած լինելը:

Մենք իսկոյն շարունակեցինք ծանապարհը, բայց դանդաղաքայլ, որովհետև եղանակը պարզ էր ու ձիարշաւ գնացող չափազանց շատ կար, այնպէս որ կառքերի առուր չէր երևում: Առաջիկա ու յետևիս տեսնում էի հովանոցների մի ամբողջ դեռ, որ շատ սիրուն տեսարան էր ներկայացնում, — հովանոցների գոյնգոյն երեսները պալճառ փողփողում էին արևի առաջ, իսկ նրանց տակին գոյանում էին գունաւոր ստերներ, որոնց միջից երևում էին կանացի գլուխներ՝ քնքոյշ ու նուրբ գծերով: Սիրուն դէմքեր համեմատաբար շատ կային, բայց նրանք զուրկ էին տեմպերամենտից. տեմպերամենտ չէր նկատուում մինչև անգամ Ֆինանսական աշխարհին պատկանող տիկիկների մէջ, որոնք ասենք, ինչպէս շատ բաներ, տեմպերամենտներն էլ աւելի ցոյց են տալիս թէ ունեն, քան իսկապէս ունեն: Բայց այդ բաց կառքերը, այդ բնութոյն լծասարքերը, օդում ծառերի կանաչ փոնի վրայ փողփողող շքեղ վառ հագուստները, -- վերջապէս այդ շքեղազարդ մարդկանց ու վայելչագեղ ձիերի բազմութիւնը գնացքին վերին աստիճանի քաղաքակիրթ և միւլնոյն ժամանակ գեղարւեստականութիւնից ոչ զուրկ տեսք

էին տալիս: Ինձ ուրախացնում էր այն, որ այդ շարժումն ու իրա-
րանցումը, ինչպէս պարզ երևում էր, Անեկիային հետաքրքրում ու
զւարճութիւն էր պատճառում: Իմ նկատողութիւններին պատաս-
խանելով նա նայեց ինձ երախտագէտ հայեացքով, կարծես թէ ես
պատրաստած լինէի նրա համար այդ զւարճութիւնը: Նրա դիմացը
նստած լինելով կարող էի ազատ նայել նրա վրայ, բայց ես շուտ-
շուտ երեսս դարձնում էի դէպի պաննա Ձաւիլովսկան, որից, ինչ-
պէս սառցրած ջրով լիքը շիշից, շարունակ ցուրտ էր փչում: Այդ
օրիորդը արդէն սկսել էր ծիծաղս բերել, որովհետեւ իրան այնպէս
էր պահում, կարծես թէ, եթէ իմ հարցերին պատասխանում էր
ու տանում էր իմ ներկայութիւնը իւր կողքին, այդ միայն իւր
բարեկրթութեան ու վերին աստիճան քաղաքավարի լինելու շնոր-
հիւ էր անում: Այդ որ տեսայ, ես աւելի սկսեցի մօտ-մօտ անել
նրան, բայց մասամբ ուրախ կերպով, որ վերջում սկսեց նրան
չարացնել: Վերջապէս հասանք Մոկոտովսկի դաշար: Հօրաքրոջս
կառքի համար պահել էին սովորական տեղը տրիբունայի մօտ:
Հէնց որ մենք տեղ հասանք, իսկոյն զանազան ծանօթներ, տոտա-
լիզատորի տոմսակներ խրած գլխարկների վրայ, եկան ողջունելու
հօրաքրոջս ու շնորհաւորելու նրա «Naughty-boy»-ի արի ու յոյ-
սեր տեղը տեղի պատճառով: Ամենաշատնի ձիաոէրերից մէկը
ասաց հօրաքրոջս, թէ նրա ձին հիանալի է, թէեւ գուցէ ոչ բա-
ւականաչափ վարժւած, բայց այդ ոչինչ, որովհետեւ գիշերը անձրեւ
է եղել ու գետինը կակզել է, այնպէս որ շատ մեծ հաւանականու-
թիւն կայ, որ «Naughty-boy»-ի պէս ուժեղ նժոյգը չաղթող դուրս
գալ: Ինձ թւաց, թէ նա այդ հեզնաբար ասաց, և ես սկսեցի մի
քիչ անհանգստանալ: «Naughty-boy»-ի պարտութիւնը կը թունա-
ւորէր այդ ամբողջ օրը հօրաքրոջս համար և հետեւաբար ինձ հա-
մար, որովհետեւ մենք չէինք կարող ի սրտէ ուրախանալ, երբ որ
հօրաքրոջս վատ տրամադրութեան մէջ լինէր: Մինչ այդ՝ ես սկսեցի
ման գալ իրար յետեւից շարւած կառքերի կողքով, դիտելով դաշտը
ու աչքերովս փնտռելով ծանօթներին: Բազմութեանը չափ չը կար.
տրիբունաներին նայելիս երևում էր միայն մի սև զանգւած, որի
վրայ կանանց զգեստները զոյնզոյն բծեր էին կազմում: Ամբողջ
ասպարէզը շրջապատուած էր հանդիսականների սոււար օղակով:

Քաղաքի պատնէշը նոյնպէս սեւին էր տալիս հետաքրքիր ամբօխից։ Տրիբունայի աջ ու ձախ կողմից երկու թէւի նման ձգւում էին կառքերի երկու շարք, որոնցից իւրաքանչիւրը, առանձին առած, ծաղիկներով լի զամբիւղի նմանութիւն էր տալիս։

Տրիբունայից մի հարիւր քայլ հեռու նկատեցի մի կառքում պանի Մետատինսկայի չարածճի քիթն ու կարմրաթուշիկ երեսը։ Երբ որ մօտեցայ բարեւելու նրան, նա ասաց, որ մարդը գնացել է փնտռելու օրիորդ Հիլստին, որից յետոյ մի հանքի տւեց ինձ հետեւալ հարցերը,— ինչպէս են հօրաքոյրս ու պանի Յելինան, Անելկան էլ է եկել ձիարշաւ, ինչպէս են գնալու Փաշտէյն, եթէ որ պանի Յելինան չի կարողանում տեղերից վեր կենալ, արդեօք կը յաղթի «Naughty-boy»-ը, եթէ յաղթի՞ ի՞նչ կը լինի, քանի մարդ կը լինի իմ ճաշին։ Այդքան ժամանակ կանգնած մնալով նրա կառքի կողքին ես նկատեցի, որ նրա աչքերի արտայայտութեան մէջ վերին աստիճանի քաղցրութիւն կայ և ոտները հրաշալի ոտներ են, բայց եթէ ուզէի պատասխանել նրա հարցերին այնպէս միահամուռ կերպով, ինչպէս նա էր տալիս այդ հարցերը, ես պէտք է, Նեքսպիրի Ռոզալինայի ասածի պէս, Փարզանտուայի բերանն ունենայի։ Ուստի տասը հարցերից մէկին պատասխանելով ու խնդրելով որ ձիարշաւից յետոյ ինքն ու մարդը ուղղակի ինձ մօտ գան, ես էլ Մետատինսկու յետեւից գնացի Կլարային փնտռելու, որովհետեւ իմ կարծիքով քաղաքավարութիւնը պահանջում էր, որ ես մօտենայի նրա կառքին։ Դուրս եկաւ, որ նրա կառքը հօրաքրոջ կառքի մօտերը մնէր կանգնած։ Կլարան այնպիսի տալուորութիւն էր գործում, կարծես հելիոտրոպներով ծածկւած բլուր լինէր։ Նա շրջապատւած էր արտիստներով ու նուագամուկներով և հետները ուրախ-ուրախ խօսում էր։ Ինձ որ տեսաւ, յօնքերը մի քիչ կիտեց ու բաւական սառնութեամբ ընդունեց ինձ, բայց այնպիսի սառնութեամբ, որ սպասում է միայն մի քաղցր, բարեկամական խօսքի, որպէս զի փոխւի վերին աստիճանի մտերմութեան։ Սակայն ես սառը մնացի և մի քառորդ ժամ ամենաքաղաքավարի ու պաշտօնական կերպով խօսակցելուց յետոյ ճանապարհս շարունակեցի ու ճանապարհին սլատահող ծանօթներիս հետ փոխադարձաբար մի քանի կարճ հարց ու պատասխաններ տալով վերադար-

ձայն դէպի մեր կողքը, որովհետեւ այդ միջոցում արդէն երկու առաջին արշաւները վերջացել էին և հասել էր «Naughty-boys»-ի հերթը:

Նայեցի հօրաքրոջս, — դէմքի արտայայտութիւնը հանդիսաւոր էր. սակայն նկատելի էր, որ աշխատում է իրան սառնասիրտ պահել: Ընդհակառակը Անելկայի դէմքի վրայ պարզ արտափայլում էր սրտի անհանգստութիւնը: Բաւական երկար սպասեցինք ձիերի դուրս բերելուն, որովհետեւ ժոկէջներին կշռելը սովորականից աւելի տեւեց: Մինչ այդ՝ վազէվազ մօտեցաւ մեզ Մենաորինսկին, հեռւից երկար ձեռները շարժելով ու ցոյց տալով տոտալիդատորում առած տոմսակները:

— Միլիոններ եմ վայր եկել «Naughty — boys»-ի համար, — գոռալով ասաց նա, — եթէ նա դաւաճանի ինձ, Պլոշովը գրաւ դնել կը տամ:

— Յոյս ունեմ, — արժանապատուութեամբ սկսեց պատասխանել հօրաքրոջս, — որ դուք...

Բայց խօսքը չը վերջացրեց, որովհետեւ այդ բոսլէին տրիբունայի շուրջը սեւին տուող ամբոխի վրայից երևացին ժոկէջների գոյնզգոյն բաճկոնները: Ձիերին ասպարէզ էին դուրս բերել: Նրանցից մի քանիսը փակւած տեղից դուրս պրծնելով խոկոյն գլուխներն առնում էին ու վազ տալիս դէպի այն տեղը, որտեղից պէտք է սկսէր արշաւը, միւսները գնում էին դանդաղ ու հանդարտ քայլերով: Ստարտից յետոյ ձիաւորները ձիերի գլուխը բաց թողեցին և քառափախս (галопъ) անցան մօտներովս՝ սուսար խմբով ու ոչ շատ արագաքայլ, որովհետեւ երկպառօյտ արշաւ էր, ու պէտք էր այնպէս անել, որ ձիերի ոցժերը շուտով չսպառւէին: Բայց շատ չանցած ձիաւորների շարքը երկարացաւ ու շղթայի ձև ստացաւ: Տեսնողին այնպէս էր լուում, կարծես քամին ճանապարհի վրայ ճոթի գոյնզգոյն կոորներ էր շաղ տւել: Ամենաառաջին սլանում էր ոտից-գլուխ սպիտակ հագած ժոկէյը, նրա յետևից՝ շորը կապոյտ, զլխարկն ու թևքերը կարմիր՝ ժոկէյը, նրանից էլ յետոյ կողքէկողք երկու հոգի, մէկը՝ ոտից-գլուխ կարմիր, միւսը դեղնակարմիր, — մեր սև ու նարինջագոյն Կուրան վերջնութեւ տեղն էր բռնում, իսկ նրա յետևից, համարեա նրանից կպած, սլանում էր սպիտակ ու կապոյտ

հագած ձիււորք: Սակայն այդ կարգը երկար չը տևեց: Երբոր արշաւողները մօտեցան դիմացի կիսաշրջանին, կառքերում իրարանցում բարձրացաւ. կանանցից սաստիկ հետաքրքիրները սկսեցին վեր կենալ՝ կանգնել կառքերի բարձրի վրայ, որպէս զի արշաւի ոչ մի միջնադէպը աչքից բաց չը թողնեն. նրանց յիշնակին հետևեց և հօրաքոյրս, որ, ինչպէս սլարդ երևում էր, էլ չէր կարողանում տեղումը հանգիստ նստել:

Անելկան իւր տեղը տւեց օրիորդ Զաւիլովսկային, որ մի քիչ կոտորաուելուց յետոյ բարձրացաւ՝ կանգնեց հօրաքրոջս կողքին, իսկ ես Անելկային կանգնացրի առջևի նստարանի վրայ և, որովհետև նա առաջին նեցուկ չուներ, ձեռքիցը բռնեցի ու այդպէս բռնած պահում էի, որ վայր չ'ընկնի: Խոստովանուում եմ, որ այդ րոպէին այնքան ձիարշաւի մասին չէի մտածում, որքան նրա մասին, որ այդ քաղցրիկ ձեռքը հանգչում է իմիս մէջ ու յետ չի քաշուում: Հօրաքրոջս ուսերը տեսարանը մի քիչ ծածկում էին աչքիցս, բայց ոտներին ծայրի վրայ կանգնելով տեսայ ամբողջ արշաւարանն ու ձիաւորներին, որոնք արդէն հասնում էին կրկեսի հակառակ կողմի այն կէտին, որից պէտք է ծռէին դէպի մեզ: Հետուից նրանք այնպէս էին երևում կարծես օդում թռչող գոյնգոյն բզէզներ լինէին: Փախաւ այդ հեռաւորութիւնից դանդաղ էր թւում, իսկ ձիերի առջևի ու յետևի ոտների շարժումները՝ մեքենայական: Սակայն չը նայած առերևոյթ դանդաղութեանը այդ ամբողջ խալտածամուկ շղթան արագութեամբ փոխում էր տեղը: Չիաւորների կարգը նորից փոխւել էր: Առաջից գալիս էր դարձեալ սպիտակ ժօկէյը, նրա յետևից՝ կարմիրը, իսկ մեր Կուբան արդէն երրորդ տեղն էր բռնում: Միւսները շատ յետ էին մնացել և նրանց ու առաջընթացներին բաժանող տարածութիւնը րոպէ առ րոպէ աւելանում էր: Պարզ էր, որ «Naughty—boys»-ը այդ ձիերի մէջ ամենավատերիցը չէր: Մի վայրկեան նրանք աչքիցս ծածկւեցին, բայց նորից տեսայ նրանց, երբ եկան՝ մեր կողքովն անցան: Կարմիր ժօկէյը քիչ էր մնում հասնէր սպիտակին, բայց Կուբան նրանց աւելի մօտ էր քան նրանք միմիանց: Այժմ ինձ համար պարզ էր, որ սպիտակը պէտք է յետ ընկներ, որովհետև նրա ձիու կողքերն այն աստիճան թաց էին ու փայլում, կարծես ջուրը կոխած:

հանձնած լինէր: Կարմիրց շատ էր վախենալու, սակայն մտածեցի, որ ամենալատ դէպքում «Naughty—boy»-ը երկրորդ մրցանակը կտանի ու պարտութիւնը կատարեալ չի լինիլ: Ինձ յոյս էր ներշնչում և այն, որ նա այնքան սառնարիւն կերպով էր վազում, թանկերը այն աստիճան կանոնաւոր ու հանդարտ էր քցում, որ ասանոցը կը կարծէր, թէ նա ամենօրեայ, սովորական մի բան է կատարում: Հանդիսատեսների հետաքրքրութիւնը ըստէ առ ըստէ սաստկանում էր:

—«Naughty—boy»-ը չաղթւեց,—կամաց հարցրեց ինձ Անելկան, տեսնելով այն կարգը, որով ձիերն անցան տրիբունայի կողքով: —Ո՛հ, սիրելիս: Պէտք է դեռ մի պտոյտ էլ անեն,—պատասխանեցի նրան՝ ձեռքը կամաց սեղմելով:

Նա էլի ձեռքը յետ չը քաշեց: Ասենք ուշ ու միտքը ձիարշաւի հետ էր: Այն ըստէին, երբ ձիերը նորից երեւացին տրիբունայի միւս կողմից, Կուբան արդէն երկրորդ տեղն էր բռնում. սպիտակ ժօկէյի ձին այն աստիճան ուժից ընկել էր, որ մինչև աչդ ժամանակ յետ մնացած ձիաւորները սկսում էին յետևիցը հասնել: Արդէն ամենքի համար ակներև էր, որ չաղթանակը երկուսից մէկն է տանելու՝ կամ կարմիրը կամ նարնջագոյնը: Կուբան մի քիչ էլ մօտեցաւ կարմիրն ու նրանք աչդպէս, իրարից հինգ-վեց ձիաչափ տարածութեամբ բաժանւած, անցան կրկէսի մի նշանաւոր մասը: Յանկարծ տրիբունաներում շշուկ բարձրացաւ,—անշուշտ արտակարգ բան էր կատարւում: Նայեցի,—Կուբան ակներևաբար հասնում էր իւր ակոյցնանի յետևից: Շշուկը ազմուկ դարձաւ: Անելկան այն աստիճան զրաւեց, որ աչժամ ինքը սկսեց նետարդացոյց սեղմել ձեռքս, անդադար հարցնելով,—«Ի՛նչ է երևում, ի՛նչ է երևում: Զիաւորներն արդէն կրկէսի ձախ կողմումն են: Կարմիրը, մի քանի ճիւղոտ տալով ձիուն, նորից առաջ ընկաւ, բայց «Naughty—boy»-ի դունչը համարեա կաշւում էր նրան: Գնդակի պէս սլանալով նրանք հասան տրիբունաների դժին, ուր սկզբում նորից աչքներիցս ծածկեցին: Մի քանի վայրկեանից յետոյ մաքառումը պէտք է վերջանար: Տրիբունաներում տիրեց ըստէական խաղաղութիւն, որ մի ակնթարթում տեղի տւեց աղմկալի աղաղակների: Շատերը իջան կառքերից ու վազեցին դէպի կրկէսի ցանկապատը ու նոյն ըստէին

երևացին ձիերից մէկի կարմիր ռնգերը, յետոյ գլուխը՝ շարի պէս ձգւած վզով և ձիու վրայ, կարծես հողմատար, սև ու նարնջագոյն շորերու Տրիբունայում հնչեց զանգակը, — յազլթութիւնը մենք տարանք:

Կարմիր ժօկէյը մի քանի ձիաչափ տարածութիւն յետ քնաց:

Պէտք է ճիշտն ասած, — հօրաքրոջս սառնասիրտ պահեց իրան. միայն ճակատին երևացին մի քանի կաթիլ քրտինք, որ նա սկսեց թաշկինակով սրբել: Անեկան յուզւած էր, վերին աստիճանի ուրախ ու երջանիկ: Ես ու նա սկսեցինք շնորհաւորել հօրաքրոջս. պաննա Զաւիլովսկան անգամ արտասանեց մի քանի ֆրանսերէն նախադասութիւններ, որ կարծես տիկին Բոքէլի զրոյցներից անգիր արած լինէր: Շատ չանցած ծանօթ հանդիսատեսները շրջապատեցին մեր կառքը և հօրաքրոջս յաղթանակը կատարեալ դարձաւ: Իմ սիրտս էլ հրճուեմ էր: Հրճանքիս պատճառը արշաւի ժամանակ Անեկայի մի քանի անգամ ձեռքս սեղմելն էր: Զուր էի ինքս ինձ ասում, թէ նա կարող էր այդ անգիտակցաբար անել, որովհետև իսկոյն էլի սկսում էի մտածել, որ կանանց դիմադրութիւնը, եթէ ընկճելու է, առհասարակ ընկճուեմ է յափշտակութեան ու ինքնամոռացութեան րօպէներում, լինի դա յառաջացած ուրախ հանդէսից, գեղեցիկ տեսարաններից թէ կեանքի սովորական պայմաններից տարբեր որ և է ուրիշ հանգամանքներից: Այդպիսի ժամանակ մարդու ջգերը իրար են զալիս և շատ հասկանալի է, որ մարդ կորցնում է իւր սովորական հաւասարակշռութիւնը: Ի նկատելի առնելով Անեկայի այդպիսի դրութեանը, ես այն եզրակացութեանն եկայ, որ նա արդէն դադարում է իրան տողորդող զգացմունքի դէմ կռւելուց, և որոշեցի վճռական կերպով վարւել:

Կարծում եմ, որ Պլոշովում այդպէս վարւելու համար յարմար առիթ հեշտ կը գտնւի: Վաղը վերադառնում ենք այնտեղ: Այսօրւան ճաշ, խօսակցութիւններն ու հանդէսը թմրադեղի կաթիլների դեր խաղացին: Անեկան ենթադրել անգամ չի կարող, թէ ինչ երջանկութիւն է սպասոււմ մեզ, — բայց դրա համար նա պէտք է տայ ինձ իւր հոգին ամբողջովին, անպայման և անսահմանափակ: Թէև հօրաքրոջս առաջուց ասել էր պանի Յելինային, որ ինքն ու Անեկան գուցէ մինչև վաղը քնան Վարշուայում, բայց էլի

այսօր և եթ ճաշից յետոյ պէտք է վերադառնայինք Պլոշով, եթէ որ մեզ չը խանդարէր մի անակնկալ դէպք: Ճողը, ճաշից յետոյ էլ թէչը՝ տեւեցին մինչև ժամի տասը, իսկ երբ որ վերջին հիւրերը մնաւ բարև արեցին ու գնացին, եկան իմաց տեւեցին, որ «Naughty-boy»-ը հիւանդացել է: Սարսափելի իրարանցում բարձրացաւ: Մինչև ուղարկեցինք անասնաբոյժի յետևից, մինչև դտան, կէս գիշերն անցաւ: Հօրաքոյրս մտածել անգամ չէր ուզում Պլոշով գնալու մասին:

Անելկան ուզում էր գնալ, բայց տեսաւ, որ ես անպատճառ մի որ և է պատրուակ կը գտնեմ ու կերթամ նրան ծանապահ գցելու, իսկ նա դեռ ինձնից վախենում է: Հօրաքոյրս համոզում էր նրան՝ չը գնաց, որովհետև այդքան ուշ վերադառնալով նա բոլոր տնեցոց ու պանի Յելինային քնտուղից կը զարթեցնի, և վերջը ասաց.

— Լէօնը չի նեղանում, որ ես միշտ այստեղ ինձ ոնց որ իմ տանն եմ համարում,— ուստի դու էլ կարող ես այնպէս համարել, թէ իմ տանս ես: Այնպէս, ինչպէս եթէ Պլոշովը տայի նրան և ինքս մնայի մէջը ու ձեզ էլ չը թողնէի գնաք, մինչև որ պանի Յելինան լաւանար:

Այդ վերջնականապէս համոզեց Անելկային գիշերը մնալ Վարչաւացում:

Այժմ գիշերւոյ ժամի երեքն է: Արդէն լոյս է, բայց բակումն ու ակոռատների մօտ դեռ մինչև այժմ էլ փայլփլում են «Naughty-boy»-ին խնամող սպասաւորների լապտերները: Հօրաքոյրս բարի գիշեր ասելիս, չաչտնեց, որ դեռ մի օր էլ կը մնայ Վարչաւացում: Ես նրան ասացի, թէ կարեւոր թղթեր եմ թողել Պլոշովում, դնալու եմ բերելու, ի դէպ Անելկային էլ կը տանեմ տեղ կը հասցնեմ: Ես ու Անելկան մենակ կը մնանք ու ես այլ ևս չեմ տատաշիլ: Որ միտք եմ անում, թէ գուցէ այդ քաղցր էակին կրճքիս սեղմած տանեմ Պլոշով ու ծանապարհին նա խոստովանւի ինձ, թէ ինձ սիրում է այնպէս, ինչպէս ես եմ նրան սիրում,— արիւնը խփում է գլուխս:

Երկինքը ամպամած է ու անձրև է մաղում, բայց քանի գնում աւելի է լաւանում: Ամենաշատը մի քանի ժամ է բաժանում ինձ այն բւպէից, երբ ինձ համար նոր կեանք է սկսւելու: Ի հարկէ չեմ

քնում ու չեմ կարող քնել, թէկուզ իմանամ թէ կեանքս քնելուց է կախած: Աչքերս որ ասես չեն ծանրացել: Գրում եմ ու մտաբերում՝ ինչ որ մնացել է յիշողութեանս մէջ այսօրւայ դէպքից: Բռանս մէջ դեռ զգում եմ նրա ձեռքի տաքութիւնն ու մատների դողդողալը, որոնք յետ չէին քաշուում, երբ որ ես սեղմում էի: Նս չարդարել, դատարարակել, զարգացնել ու պատրաստել եմ նրա հոգին սիրոյ համար, և նմանում եմ այնպիսի զօրավարի, որ ամեն բան նախատեսել, չափել-կշռել է, բայց չի քնում այն օրւայ նախընթաց գիշերը, որ պէտք է որոշի նրա բախտը:

Բայց Անեկլան է քնած է տան միւս մասում, և հաւատացած եմ, որ նրա քունն անգամ իմ օգտին է աշխատում. շատ կարելի է, երազում է ինձ ու ձեռները մեկնում դէպի ինձ: Գրա մասին որ մտածում եմ, մարմնովս սարսուռ է անցնում:

Ձարիքների, յիմարութիւնների, տարակուսանքի ու կասկածների այն ծովում, որ կեանք է կուլում, միմիայն մի բան կայ, որի համար արժի ապրել, որ աներկբայելի է և մահւան չափ զօրաւոր — սէրը: Նրանից դուրս ոչինչ չը կայ...

6 լունխի.

Այսօր Անեկլային բերեցի Պլոշով և այժմ ինքս ինձ հարցնում եմ, հօ չեմ գտել, Ձէ, գրկած չը բերեցի նրան, չը լսեցի նրա խոստովանութիւնները: Նա ինձ ի բաց մերժեց այն աստիճան առանց վարմունքի, ամօթխածութեան այնպիսի բուռն բողբոջ, որ ոչինչ չէի կարող անել: Ի՞նչ է նշանակում այդ, Ի՞մ գլխումը լսելք չը կայ, թէ նրա կրծքումը՝ սիրտ: Ինչի՞ դէմ եմ կուլում եմ, ի՞նչը խորտակեց ինձ: Ինչո՞ւ է նա ի բաց մերժում ինձ: Գլխումս այնպիսի քաօս է, որ չեմ կարողանում մտածել, գրել, դատել և միայն շարունակ հարցնում եմ ինքս ինձ, — Ի՞նչ է խորտակում ինձ:

7 լունխի.

Անշուշտ մի շատ մեծ սխալ եմ արել, այդ կնոջ մէջ ինչ որ մի բան չեմ նկատել ու հաշի չեմ առել: Ամբողջ երկու օր աշխատում էի հասկանալ ինձ հետ պատահածը, բայց գլխումս այնպիսի քաօս էր, որ չէի կարողանում մտածել: Այժմ ուշքս և մէջս

եղած սառնասրտութիւնը հաւաքում եմ դու թիւնս որոշելու համար: Նա շատ պարզ կը լինէր, եթէ Անեղկային պահպանելիս լինէր սէրը դէպի իւր մարդը. այն ժամանակ ես կը հասկանայի այն վիրաւորած ամօթխածութիւնն ու զայրոյթը, որով նա, այդ աստիճան քաղցր ու հեզ էակը, վանեց ինձ իւր ծնկերի մօտից: Բայց այդպիսի բան ենթադրել չեմ կարող: Այնքան խելք դեռ ֆնացել է գլխումս, որ չեմ մոռացել, թէ ամեն բան չափից վեր սև գոյնով տեսնելը նոյնպիսի սխալմունք ու չիմարութիւն է, ինչպէս ամեն ինչ չափազանց վարդազոյն երեակայելու Ո՛րտեղից պէտք է նրա մէջ ծագէր սէր դէպի Կրօմիցկին: Ամեն բան նորից չափենք, կշռենք: Նա մարդու գնաց առանց սիրելու. միասին անց կացրած ժամանակը մարդը գործ էր դնում կնոջ փտահութիւնից խաբեքայութեամբ օգտուելու վրայ, նրա պապենական օջաղը ծախեց և այդպիսով նրա մօր հիւանդութեան պատճառը դարձաւ Զաւակ չունենալ: Ասենք զաւակները կանանց չեն ստիպում աւելի սիրել իրանց մարդկանց, այլ միայն ստիպում են աւելի ի նկատի առնել նրանց, ապահովեցնում են նրանց, ուրիշ խօսքով ասած՝ աւելի սերտ են դարձնում արտաքին և ոչ սրտերի կապը: Միւս կողմից Անեղկան չի պատկանում այն կանանց թւին, որոնց սրտում սէրը հարսանիքից յետոյ չանկարծ բռնկում է բոցի պէս, որովհետեւ այդպիսի կանայք կամ սաստիկ են քաշում մարդու կարօտը կամ հեշտութեամբ են սիրական դառնում: Միտքս այնքան կոպիտ արտայայտեցի, որ սիրտս կսկծաց, բայց ինչու պէտք է ինձ խնայեմ: Ես հաստատ համոզւած եմ, որ Անեղկան դէպի Կրօմիցկին չի տածում ոչ միայն սէր, այլ և սիրոյ նման մի որ և է զգացմունք, և որ աւելին է՝ յարգանք անգամ չի տածում. այնքան է որ ինքն իրան թոյլ չի տալիս արհամարհել նրան,—ահա նրա հոգեկան վիճակը: Այդ բոլորը մի անգամ ընդ միշտ ապացուցւած եմ համարում, այլապէս կոյր պէտք է լինէի:

Եթէ նրա սիրտը իմ վերադարձի ըոպէին «tabula rasa» (անգիր քարտէզ) էր, ես պէտք է մի բան գրէի այդ քարտէզի վրայ, ես, որի ձեռքից ուրիշ պայմաններում շատ յաճախ է եկել այդ, ևս, որին այս անգամ այդ աւելի էր պէտք, քան երբ և իցէ, որ զարթեցրել եմ նրա սրտում բարեկամութեան, կարեկցութեան

ղգացումներ ու քաղցր լիշողութիւններ, առանց զանց անելու որ և է բան, ի նկատի առնելով ամեն ինչ և ունենալով այն ոյժը, որ տալիս է իսկական սէրը: Արդ՝ երկու ձեռքով բռնում եմ գլուխս և ասում ինքս ինձ,—Այ՛ մարդ, դու հօ գաւառական առիւծ ¹⁾ չես ու համոզւած չես, որ ոչ մի կին քեզ չը սիրել չի կարող, ուրեմն մի լաւ մտածիր տես, արդեօք խաբւած չես եղել կարծելով թէ նա քեզ սիրում է, թէ նրա սիրտը իրօք քեզ է պատկանում: Ինչն է ցոյց տալիս, թէ այդ ինքնախաբէութիւն է:

Առաջին հայեացքից՝ նրա դիմադրութիւնը

Բայց չէ որ երբեք չեմ համարձակւել կարծել, թէ նա չի դիմադրիլ: Երեւակայում եմ մի որ և է մարդասէր կին, որ գտած է ուրիշ տղամարդու վրայ, ու ինքս ինձ հարց եմ առաջարկում, կարելի է արդեօք ենթադրել, որ այդ կինը ոչ մի դիմադրութիւն ցոյց չը տայ, չը կուի ինքն իրան ու սիրած տղամարդու դէմ, մինչև ուժասպառ լինելը:

Դիմադրութիւնը սէրից չի բխում, և քանի որ այդ երկու ոյժերը կարող են իրար կողքի գոյութիւն ունենալ՝ մի բոյնի մէջ ապրող երկու թռչունի պէս, կը նշանակի իրար փոխադարձաբար չեն բացամերժում:

Ես այս լիշատակարանը ոչ միայն նրա համար եմ գրում, որ այդ արդէն պահանջ ու մոլութիւն է դարձել ինձ համար, ոչ միայն այդ ձևով եմ խոստովանում սրտումս եղածը, այլ նմանապէս և այն նպատակով, որ կարողանամ միշտ բոլոր դէպքերը մտաբերել, մոքով ընդգրկել նրանց ամբողջ ընթացքը և նրանց մասին ինքս ինձ հաշիւ տալ: Եւ ահա այժմ կարդում եմ այն էջերը, որտեղ գրի եմ անցրել իմ ու Աննիկայի պատմութիւնը Պլոշով վերադառնալու օրից, նրանցում գրի է անցրած համարեա նրա ամեն մի հայեացքը, ամեն մի խօսքը, ամեն մի ժպիտը, արտասուքի ամեն մի կաթիլը, նրա հոգու ամեն մի շարժումը: Զէ, ես ինքս ինձ չեմ խաբում, այդ սխալ անալիզ չէ: Այդ գուցէ և անբախտ, բայց ոչ անտարբեր կնոջ խօսքեր, արտասուք, ժպիտներ ու հայեացքներ էին:

¹⁾ Առիւծ փոխաբերական կոչւում են այն տղամարդիկ, որոնք կանանց մէջ լաշողութիւն են ունենում: Ծանօթ. Թարգմ.

Իմ վարմունքը անշուշտ ազդած պէտք է լինի նրա վրայ: Կոյր չեմ, սիրտս ամեն օր կտրատուում է, որ տեսնում եմ, թէ ինչպէս նա օրէցօր լղարում, մաշուում է, ինչպէս դէմքը քանի զնում փոքրանում է, ձեռները՝ թափանցիկ դառնում: Եւ մազերս փշաքաղում են, երբ մտքովս անցնում է, թէ այդ ներքին կռիւը հալում, մաշում է նրա առողջութիւնը: Այդ բոլորը անհերքելի ապացոյցներ են: Նրա սիրտն ու մտածմունքները ինձ են պատկանում: Հէնց այդ է պատճառը, որ նա էլ ինձ նման անբախտ է, եւ գուցէ աւելի անբախտ քան ես:

Կարգում եմ մի քիչ առաջ գրածս, թէ ես ենթադրել անգամ էի համարձակում թէ նա չէ դիմադրել: Իրաւ է, այդպէս էր մինչև վերջերքս, բայց վերջին անգամ Վարչաւայից Պլոշով զնաւիւ ենթադրում էի, թէ նա այլ եւս չի դիմադրել, ու սխալեցի: Ոչ մի զիջումն չարեց ինձ, ամենեւին չը խղճաց, լսել անգամ չուղեց ասածս, կարծես սուրբ բաներ հայհոյելիս լինէի. տեսնում էի աչքերումը վրդովմունքի ու զայրոյթի կայծեր, սաստկութեամբ յետ քաշեց ձեռքը, որի վրայ ես համբոյրներ էի դրոշմում, եւ պոռ ինձ վիրաւորում ես՝ խօսքերը չէին իջնում շրթունքներիցը: Եւ նրա եռանդը ընկճեց իմս եւ այդ այնքան աւելի հեշտութեամբ, որքան քիչ էի սպասում ես այդ տեսակ զայրոյթի բուռն արտայայտութիւն նրա կողմից: Ախ, նա այնտեղ հասաւ, որ մինչև անգամ սպասում էր, թէ կ'իջնի կառքից ու ոտով կ'երթայ մինչև Պլոշով: «Ապահարգան» խօսքը հրաշէկ երկաթի տպաւորութիւն դործեց նրա վրայ: Ոչինչ, ոչինչ, ոչինչ չը կարողացայ յաջողեցնել՝ ոչ բուռն յափշտակութեամբ, ոչ յանդգնութեամբ, ոչ աղաչանքով, ոչ սիրոյ խօսքերով. այդ բոլորը վատ մտքով ընդունւեց, վիրաւորանք համարւեց, մերժւեց ու ոտնակոխ եղաւ: Այսօր որ տեսնում եմ, թէ ինչպէս նա հեղ ու մեղմ ման է գալիս սենեակներում, թւում է ինձ թէ հետս Վարչաւայից Պլոշով եկողը մի ուրիշ կին էր: Ինքս ինձնից թաքցնելու հարկաւորութիւն չը կայ: Այնպիսի կատարեալ պարտութիւն կրեցի, որ եթէ ոչոք զօրէր, եթէ որ եւ է ուրիշ *raison d'être* ունենայի, պէտք է այսօր հեռանայի այստեղից:

Լմւ, դիցուք թէ ինձ սիրում է. ինձ ինչ օգուտ դրանից, թէ

որ այդ սէրը երբէք չի կորստելու իրան կաշկանդող կապանքները, միշտ սրտումը թագնւած է փնտրել, ոչ մի խօսքով, ոչ մի գործով չի արտայայտուելու Այդ միեւնոյնն է որ երեւակայեմ, թէ ինձ սիրում է յոյն Հեղինէն, Կլէօպատրան, Բէատրիչէն կամ Մարիա Ստիւշարտը: Այդ էլ ոչինչ: Եւ փափագող ու ոչինչ: Եւ պահանջող սէր կը լինէր: Գուցէ և Աննկլայի սիրտը ինձ է պատկանում, բայց այդ՝ փոքրօքի, գործելու անընդունակ սիրտ է: Թերեւս նա ինքն իւր առաջ ճոխում է (позировать), թէ վսեմ հոգի ունի, որ սէրը զոհում է պարտականութեան սեղանի վրայ, և դրա շնորհիւ ինքն իրան սքանչելի է թւում: Այո, այդ անպիսի հաճոյք կարող է պատճառել, որի համար արժէ մի քանի բան զոհել: Շատ լաւ: Զոհիր ինձ քեզ համար, բայց եթէ կարծում ես, թէ շատ բան ես զոհում, զնշելով սէրդ, և թէ դրանով կարող ես բաւարարութիւն տալ պարտականութեան պահանջներին—սխալում ես:

Ախ, դեռ ես չեմ կարողանում, չեմ կարողանում ոչ հանգիստ մտածել, ոչ գրել:

(Կը շարունակւի)